ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՎԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

13.03.2026թ-ից՝ մինչև 13.08.2026 թվականը աշխատաժամանակի վերաբերյալ

1. Մասնակցել եմ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառների պետական կառավարման համակարգի մարմնի տարածքային ստորաբաժանման ղեկավարին տրված հանձնարարականների կատարման աշխատանքներին:

2. Աջակցել եմ Մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման աշխատանքներին.

3. Իրականացրել եմ աջակցություն Մարզի տարածքում համապատասխան մարզային ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնածին աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ կատարվող աշխատանքներին:

4. Իրականացրել եմ տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության հետ պետական կառավարման համակարգի այլ մարմինների տարածքային ստորաբաժանումների համագործակցությունը.

5. Իրականացրել եմ պետական կառավարման համակարգի մարմիններից, համայնքապետարաններից ստացված գրությունների, քաղաքացիների դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկումը և դրանցից բխող աշխատանքների կազմակերպումը:

դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկումը և դրանցից բխող աշխատանքների կազմակերպումը:

6. Իմ իրավասությունների շրջանակներում մասնակցություն է ցուցաբերվել մարզի համայնքներում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության գործընթացներին:

7. Ուսումնասիրվել և ընթացք է տրվել տարածքային կառավարման վարչություն մուտքագրված քաղաքացիների դիմումներին, բողոքներին և հարցումներին:

8. Պատրաստել եմ պաշտոնական պարզաբանումներ և պատասխան նամակներ՝ ուղղված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, այլ գերատեսչություններին և քաղաքացիներին:

9. Ընդգրկվել եմ մարզի համայնքներում կայացած համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների հանձնաժողովների կազմում: Ապահովել եմ մրցութային գործընթացի համապատասխանությունը «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի և սահմանված կարգի պահանջներին:

10. Քաղաքացիներից ստացված դիմում-բողոքների օբյեկտիվ և բազմակողմանի քննարկման նպատակով իրականացրել եմ արտագնա այցելություն համայնքներ: Տեղում կատարվել է փաստացի իրավիճակի ուսումնասիրություն, որի արդյունքներով կազմվել են համապատասխան արձանագրություններ, և տրվել են մասնագիտական եզրակացություններ բարձրացված խնդիրների լուծման վերաբերյալ:

ՏԿ և ՏԻՀ վարչության փորձագետ՝ Հայկ Թովմասյան

ՏԿ և ՏԻՀ վարչության պետ՝ Վանիկ Հարությունյան

Կատարված աշխատանքներ գնահատում եմ գերազանց

13.08.2026թ.